

Իսկ մեք խոստովանիմք զմարմինն¹ զախտական եւ զցանկական եւ² զմեռոտ եւ զմաշական³ բնութիւնս մեր՝ խառնեալ զանախտականն⁴ ընդ ախտականիս⁵ եւ արարեալ անախտական, անմեռն՝ ընդ մեռոտս եւ արարեալ զմեռոտն՝ անմեռ, միաւորեալ Աստուած Բանն⁶ ընդ մարդկութեանս⁷ անախտաբար եւ անորիշ⁸, միշտ՝ Աստուած եւ մարդ, եւ ո՛չ երկուութիւն⁹, այլ միութիւն հանապազորդ: Այսպէս գրաւեալք¹⁰ եղիցուք խոստովանութեամբ, եւ կարգեալ դիցուք ճառս յաճախս եւ առաւելս ըստ կարգի խոստովանութեանս մերում, զոր ես՝ Յովհաննէս Հայոց հայրապետս, կարգեցի ձեզ կէտ սահմանադրութեան¹¹ միութիւն խոստովանելով¹² աստուածութեանն եւ մարդկութեանն¹³ անապականաբար¹⁴:

Վասն որոյ բարիքնկալ հաճութեամբ զայս խոստովանութիւն ընկալեալ հաճեցան հայրապետքն¹⁵ Ասորոց, եւ ընկալեալ ողջոյն՝ գնացին խաղաղութեամբ յաշխարհն իւրեանց¹⁶ փառաւորելով զԱստուած յաւիտեանս¹⁷, ամէն:

- 1 e չիք զմարմինն (aii,m)
- 2 aii,m չիք եւ (e)
- 3 m զմաշական
- 4 a զանախտական փխ զանախտականն (ii,m)
- 5 e ընդ անախտականն զախտականս փխ զանախտականն...ախտականիս (aii,m)
- 6 m Աստուածաբանն փխ Աստուած Բանն (aii)
- 7 m մարդկութեան փխ մարդկութեանս (aii)
- 8 e չիք անմեռն ընդ...անորիշ (aii,m) (չորս տող)
- 9 eii,m երկութիւն փխ երկութիւն (a)
- 10 m գրեալք փխ գրաւեալք (aii)
- 11 m սահմանադրութիւն փխ սահմանադրութեան (aii)
- 12 ii խոստովանել փխ խոստովանելով (am)
- 13 m մարդկութիւնն փխ մարդկութեանն (aii)
- 14 e չիք Այսպէս գրաւեալք...անապականաբար (aii,m) (ուր տող)
- 15 e հայրապետք փխ հայրապետքն (aii,m)
- 16 i իւրեաց
- 17 e յաւիտեանս յաւիտեանից (aii,m) (Ասեւ հմմտ. Էջ 104, Ծան. 16)

¹⁸Արդ, կէտ եղեալ՝ սահման կարգեսցուք մերովք հաւատովք¹⁹, սկիզբն²⁰ առեալ քակելով²¹ զապականութիւն խորհրդոյ²² բնութեանցն²³, որով փրկագործութիւնս կատարի, այսինքն է՝ մարմնոյ եւ արեան²⁴ Տեառն, եւ քակեսցուք այսպէս զապականութիւն²⁵ յանապականէն: Զխմոր²⁶ եւ զջուր յայսմ հետէ արտաքս ընկեսցուք ի սուրբ եւ ի կենսաբեր²⁷ խորհրդոյն, զի մի՛ յայս նայելով²⁸ առաջնորդացն²⁹, որք գայցեն³⁰ զկնի մեր, դարձեալ ապականութեամբն³¹ խոտորեցին անկանել³² յերկաբնակ հաւատն³³ Քաղկեդոնի, եւ այսու խոտորեցուցեն³⁴ զվիճակս Հայոց, որպէս երբեմն³⁵ ի ձեռն եզրի սփռեալ³⁶ տարածեցաւ յաշխարհս մեր³⁷, զոր Տէր հրամայեաց ինձ³⁸ քակել զորումն բար-

- 18 s Եւ զխմոր եւ զջուր որոշեցին ի սուրբ խորհրդոյն, եւ ի քաղաքս եւ յանապակ հաւատաւեցին՝ ըստ Փրկչի՛ն եւ առաքելոց մորա փխ Արդ, կէտ ...աղանդն մոցա (aeii)
- 19 a հաւատովքս փխ հաւատովք (ii,m) (տե՛ս հաւատովքս սկիզբն)
- 20 i սկզբն
- 21 e քակեսցուք փխ կէտ եղեալ...քակելով (aii,m) (երկու տող)
- 22 m խորհրդոյն
- 23 a բնութեանց փխ բնութեանցն (ii,m)
- 24 ii արեանն փխ արեան (am)
- 25 a զապականացում փխ զապականութիւն (ii,m) / e չիք խորհրդոյն բնութեանցն...զապականութիւն (aii,m) (չորս տող. տե՛ս զապականութիւն... զապականութիւն)
- 26 e Այսինքն՝ զխմոր փխ Զխմոր (aii,m)
- 27 a կենսաբեր, m կենսաբեր փխ կենսաբեր (eii)
- 28 m նայելով
- 29 e չիք յայս...առաջնորդացն (aii,m)
- 30 e չիք գայցեն (aii,m)
- 31 a ապականութեամբքն փխ ապականութեամբն (ii,m) / e չիք դարձեալ ապականութեամբն (aii,m)
- 32 e չիք անկանել (aii,m)
- 33 a յերկաբնակս, ii,m յերկաբնակքն փխ յերկաբնակ հաւատն (e)
- 34 ii,m խոտորեցուցանեն փխ խոտորեցուցեն (a)
- 35 e որ փխ եւ այսու...երբեմն (aii,m)
- 36 e չիք սփռեալ (aii,m)
- 37 amii չիք յաշխարհս մեր (e)
- 38 amii մեզ փխ ինձ (e)